

### **Սիրելի՛ ուսուցիչներ**

Շնորհավորում եմ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Այս տոնական օրը ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել ձեր անսահման նվիրումի, ուսուցչի կոչմանը հավատարիմ մնալու և դժվարություններն անտրտունջ հաղթահարելու արժանապատվության համար:

Հայ ժողովուրդը միշտ էլ առանձնակի սիրով և մեծարանքով է վերաբերվել ուսուցչին՝ նրան վերապահելով հասարակական կյանքի առանձնահատուկ տեղերից մեկը և նրան տալով ամենապատվաբեր կոչումը՝ Ուսուցիչ:

Անչափելի է ձեր դերակատարությունը մեր պետության կայացման ու հզորացման գործում, որովհետև դուք եք կրթում ու դաստիարակում մատաղ սերնդին, նրանց մեջ զարգացնում պետականաշինության համար անհրաժեշտ այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են հայրենապաշտությունը, արժանապատվությունը, սերը գիտության և մշակույթի նկատմամբ:

Ձեր շնորհիվ մեր առջև բացվել են աշխարհաճանաչման ու աշխարհաընկալման մեծ ուղիներ, դուք այն փարոսն եք, որի միջոցով կարողացել ենք գտնել մեր ճանապարհը, որոնել ենք միայն գեղեցիկը, բարին և վսեմը: Դուք աջակցել եք մեզ՝ միշտ ամուր կանգնելու մեր ոտքերի վրա:

Սիրելի՛ ուսուցիչներ, դուք բացի ուսուցանող լինելուց, բոլորիս համար ծնող եք եղել և սովորեցրել եք պայքարել կյանքում, երբեք չընկճվել, սովորեցրել եք հաղթահարել ամեն մի խոչընդոտ: Եվ այսօր, երբ կյանքում ինչ-որ բանի ենք հասել, հասել ենք շնորհիվ ձեզ: Դուք ձեր գործի նվիրյալներն եք և արժանապատվությամբ եք կատարում ձեզ վրա դրված մեծ, պատասխանատու և հայրենանվեր առաքելությունը: Դուք հավերժ ճշմարտությունների ու ճշմարիտ որոնումների առաքյալներ եք, ովքեր այդպիսին մնացել են՝ անկախ առկա խնդիրներից ու դժվարություններից:

Մենք ձեր ներկայությամբ մեզ միշտ աշակերտ ենք զգում՝ անկախ նրանից, թե հասարակության մեջ ինչ դիրք ու պաշտոն ենք զբաղեցնում, և ուզում եմ բոլոր նախկին ու ներկա աշակերտների անունից շնորհակալություն հայտնել ձեզ՝ ձեր կատարած աշխատանքի համար և հայցել ձեր ներողամտությունը պատճառած հոգսերի և անհարմարությունների համար:

Գնահատում, առողջություն և երկար տարիների կյանք եմ ցանկանում ձեզ:

Միշտ ժպտացե՛ք և մնացե՛ք նույն ընդօրինակելին, բարին և համբերատարը:

Շնորհավոր տոնդ, ՈՒՍՈՒՑԻ՛Ձ: